# Կրթության ապագա առավարիչները ՄԱԿ-ի գրասենյակում



Թարգմանություններ, համակարգչային նոր ծրագրերի ծանոթություն, ինչպես նաև աշխատանք վիրտուալ գրադարանում. այսպիսին է Մանկավարժական համալսարանի Կրթության կառավարում ամբիոնի ուսանողուհիներ՝ Աստղիկ Պետրոսյանի և Էլվինա Մարգարյանի կամավոր պրակտիկան ՄԱԿ-ի գրասենյակում:




UNDPI-ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակում կամավորական սկզբունքով աշխատող ուսանողների կարծիքով ամենամյա բնույթ կրող ծրագրի իրականացումը նպաստում է ոչ միայն օտար լեզվի իմացության կատարելագործմանը, այլև կազմակերպչական կարողությունների ձևավորմանը:



Ուսանողները եռամսյա պրակտիկայի ընթացքում ձեռքբերած գիտելիքների, փորձի տարածման և ՄԱԿ-ի գործունեության վերաբերյալ կազմակերպեցին տեղեկատվական սեմինար:

